

Անուն----- Թուական-----

Կրօնի Գրաւոր դաս 10

«Երիթովի Կոյրին Բժշկուութիւնը»

Շրջագծէ՛ ճիշդ պատասխանը:

1-Ժողովուրդը որո՞ւ խօսքերուն եւ հրաշքներուն կը հիանար:

Ա-Յովհաննէսին Բ-Յիսուսին Գ-Պետրոսին

2-Աշակերտներէն զատ, յաճախ մեծ թիւով ի՞նչ Յիսուսի հետ կ'ըլլային:

Ա-ոչխարներ Բ-ուտելիք Գ-մարդիկ

3-Մեր այս պատմութեան մէջ Յիսուս ո՞ր քաղաքը կը ճամբորդէր:

Ա-Երիթով Բ-Նային Գ-Կափառնայում

4-Ճամբուն եզերքը ո՞վ նստած էր:

Ա-պատանի մը Բ-կին մը Գ-կոյր մը

5-Այս մարդը ի՞նչ կը խնդրէր:

Ա-ուրախութիւն Բ-ողորմութիւն Գ-օգնութիւն

6-Մարդը երբ իմացաւ, թէ ո՞վ կ'անցներ, սկսաւ բարձր ձայնով կանչել:

Ա-Յիսուս Բ-Յակոբոս Գ-Փիլիպպոս

7-Մօտը գտնուողները սկսան ի՞նչ ընել զինք, բայց ինք աւելի պոռաց:

Ա-խնդալ Բ-հարցնել Գ-յանդիմանել

8-Յիսուս երբ լսեց մարդուն ըսածները, մօտեցաւ անոր եւ ի՞նչ հարցուց:

Ա-Ի՞նչ կ'ուզես ինձմէ Բ-անօթի՞ տս Գ-որմէ՞ բարկացած տս

9-Մարդը ի՞նչ ուզեց Յիսուսէն, որ ընէ:

Ա-ոտքերը բուժէ Բ-աչքերը բանայ Գ-լեզուն բանայ

10-Մարդը ինչո՞վ լեցուն էր եւ վստահ էր, որ Յիսուս պիտի օգնէր իրեն:

Ա-ուժով Բ-խելքով Գ-հաւատքով

